合唱：
聖誕頌歌

КАРЕН БАЛЬЯН

СТАДИОН «РАЗДАН»

Шедевр архитектуры модернизма

ԿԱՐԵՆ ԲԱԼՅԱՆ

«...բացում...» ստատիստ

Մոդեռնիզմի ճարտարապետության գլուխգործոցը

new

ԵՐԵՎԱՆ
2025

ՀՏԴ 725.826(479.25)
ԳՄԴ 85.11
Բ 208

Բալյան Կարեն
Բ 208 «Հրազդան» ստադիոն: Մոդեռնիզմի ճարտարապետության գլուխգործոցը /
Կ. Բալյան.- Եր.: Newmag, 2025.- 152 էջ:

Կարեն Բալյանի գիրքը նվիրված է 1960-70-ականների հայկական ճարտարապետության գլուխգործոցին: «Հրազդան» ստադիոնի նախագծման և կառուցման պատմությունը ներկայացված է ազգային գիտակցության բարձրացման դարաշրջանի՝ «ձնհալի» համատեքստում:

«Հրազդան» ստադիոնը կառուցվել է 1970-ին, Հրազդան գետի գեղադիր լանջին, որից էլ ստացել է իր անունը: 70 հազար հանդիսատեսի համար նախատեսված ստադիոնը բացվել է 1971-ի մայիսի 19-ին:

«Հրազդանը» այսօր դեռ կանգուն է և պահպանում է իր վեհությունն ու մոգական ձգողականությունը, սակայն չի շահագործվում ըստ նշանակության: Նախատեսվում է քանդել այն: Խորհրդահայ մոդեռնիզմի բազմաթիվ գլուխգործոցներ են քանդվել կամ այդ ճանապարհին են: Երևանցիների հպարտության խորհրդանիշ «Հրազդանը» գուցե անէանա հենց մեր սերնդի աչքի առաջ: Ու մայրաքաղաքը կկորցնի ևս մեկ լեգենդ: Գուցե հնարավոր չլինի կանխել դա: Այդ դեպքում մնում է մյուս կործանված հրաշքների պես այն պահպանել թղթի վրա, փրկել գոնե ստադիոնի ստեղծման պատմությունը, անմահացնել հեղինակների երևակայության թռիչքը, արխիվացնել մարզական կոթողի վեհ ու հաղթական տեսքը:

ՀՏԴ 725.826(479.25)
ԳՄԴ 85.11

Գիրքը հրատարակվել է Գուրգեն Մուշեղյանի ընտանիքի
ֆինանսական աջակցությամբ:
Գրքի հայերեն հրատարակումը նվիրված է նրա 90-ամյակին:

ISBN 978-9939-967-63-9
Կարեն Բալյան, «Հրազդան» ստադիոն © 2025 «Նյու Մեգ» ՍՊԸ

Այս գրքի հայերեն թարգմանության և հրատարակության իրավունքները պատկանում են «Նյու Մեգ» ՍՊԸ-ին: Իրավունքը ձեռք է բերվել հեղինակի հետ կնքած պայմանագրով:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

11 Մոդեռնիզմի մասին

16 Իմ ժամանակի ֆուտբոլը

21 Երևանի երկու մեծ ստադիոնները

30 «Հրազդան» նոր ստադիոնի վայրը

35 «Հրազդանի» պատմությունը

40 Մոդեռնիզմը «Հայպետնախագծում»

48 «Հայպետնախագծի» կառուցվածքը

53 1968 թվականի Երևան

60 Գյումրի

65 Կորյուն Հակոբյան. ոճավորումից դեպի մոդեռնիզմ

79 Մոդեռնիստների սերունդը. Գուրգեն Մուշեղյան

87 Սպորտ

89 Գլխավոր ճարտարապետը

99 Կոնստրուկտոր Էդվարդ Թոսունյան

103 Հայկական մոդեռնիզմի երկու առանձնահատկությունները

110 «Հրազդան» ստադիոնի շինարարությունը

122 «Հրազդան» ստադիոնի ճարտարապետությունը

144 Լուսանկարների ցանկ

Նինային՝ մեր ամուսնության 50-ամյակի առթիվ

«Հրազդան» ստադիոն: Եվրոպան այդպիսին չունի. կան ավելի վատերը, կան ավելի լավերը, բայց երկրորդ նմանը չկա: Օրիգինալ, շատ գեղեցիկ ստադիոն է: Եվ առաջին հերթին դա վերաբերում է ճարտարապետությանը: Ի՜նչ տաղանդավոր մարդիկ են ստեղծել այն: Մեզ համար լավագույններից լավագույնը: Հնարավո՞ր է մտնել այդպիսի խաղադաշտ և չվառվել հաղթելու կրքոտ ցանկությամբ:

ԷԴՈՒԱՐԴ ՄԱՐԿԱՐՈՎ
1970-ականների «Արարատի»
կենտրոնական հարձակվող

ՄՈԴԵՌՆԻԶՄԻ ՄԱՍԻՆ

«Խորհրդային կայսրության» 70-ամյա պատմությունն ակնհայտորեն իր արտացոլումն է գտել քաղաքների մոդելներում և ճարտարապետության ձևերում: Այդ ժամանակաշրջանի երկու միանգամայն տարբեր քաղաքական փուլերը՝ խրուշչովյան «ձնհալը» և բրեժնևյան «լճացումը», քաղաքաշինության և ճարտարապետության մեջ միավորված են միևնույն «մոդեռնիզմ» ընդհանուր հասկացությամբ: (Գորբաչովյան «վերակառուցման» կարճ հնգամյակում, իհարկե, դեռ շարունակվում էր կառուցվել մոդեռնիստականը, սակայն ձևավորվում էր մեկ ուրիշը՝ պոստմոդեռնիստականը, որը հնարավորություն էր բացում հաջորդող, հետխորհրդային ժամանակի համար): Ո՞րն է «մոդեռնիզմ» հասկացության իմաստը: Կյանքի փոփոխությունը դեպի ապագան, նորը, լավագույնը: Անշուշտ, մոդեռնիզմի սկիզբը՝ «ձնհալի» մոդեռնիզմը, և վերջը՝ «լճացման» մոդեռնիզմը, ունեին առանձնահատկություններ, նույնիսկ զգալի տարբերություններ: Դրանք երկու տարբեր մոդեռնիզմներ էին, սակայն միևնույն ոճի երկու մասերը կամ, եթե ոճ հասկացությունը չափազանց լայն է անվանելու համար այն, ինչ եղել է, ապա մոդեռնիզմի, մասնագիտության զարգացման մեջ միևնույն ուղղության երկու մասերը: «Ձնհալի» մոդեռնիզմը ստալինիզմի խավարից հետո կյանքի համար թեթև, լուսավոր միջավայրի ստեղծման հույսն էր, որը երկարաձգվել է ևս տասը տարի՝ պատերազմում արյան գնով ձեռքբերած մեծ հաղթանակից հետո: Այն նոր, թեթև ու լուսավոր, ոչ սիմետրիկ ազատ ձևերի ու տարածության որոնումն էր[1]: «Լճացման» մոդեռնիզմը նախկին հույսերի անիրականալիության

Երևանի «Հրազդան» ստադիոնը: Ճարտարապետներ՝ Կ. Հակոբյան, Գ. Մուշեղյան, կոնստրուկտոր՝ Է. Թոնոյան: 1970

1 К. Бальян. Архитектура свободных форм и пространств. Армянский модернизм. 1960-е — середина 1970-х. В кн.: Эстетика «оттепели». М.: РОССПЭН, 2013. С. 174–195. (Ծանոթագրությունները՝ հեղինակի):

էլ ավելի մեծ գիտակցումն էր: Հիասթափություն, անխուսափելիության զգացողություն: Խորհրդային ներկայի տաղտուկ, միօրինակություն, վիատություն:

Դրանք նաև թիկունքիդ շնչող, նեոկլասիկ ձևեր ունեցող ստալինյան ոգով կառույցներն էին: Բայց երկու ժամանակն էլ, կրկնենք, համակված են նույն՝ մոդեռնիստական ճարտարապետությամբ:

Հետխորհրդային ժամանակահատվածում «խորհրդայինի»՝ նրա գաղափարախոսության, պետականության և մոդեռնիզմի ձևերի՝ «ճնհալի» ու «լճացման», ժխտումը վերակերպվեց պոստմոդեռնիզմի ձևերի՝ իրենց արժեքային չափանիշներով, որոնց թվում չկար ոչ «ճնհալի» մոդեռնիզմի խիստ մինիմալիզմը, ոչ էլ «լճացման» մոդեռնիզմի բրուտալությունը: Պոստմոդեռնիզմը շատ բան սկսեց ավելի վատ անել, և նրա ֆոնին երկու մոդեռնիզմից շատ բաներ սկսեցին ավելի պարզ, ավելի լավ, միաժամանակ ավելի ամբողջական ընկալվել:

Մոդեռնիզմի ավելի «մաքուր» և զուսպ միջավայրն ու ձևերն անցած ժամանակի հեռավորությունից հանրությունը սկսեց ավելի լավ և ավելի բարձր գիտակցել ու գնահատել: Լավագույնը մոդեռնիզմում սկսեց որակվել «ճարտարապետության հուշարձան», որոշ առավել նշանավոր կառույցներին տրվեց «գլուխգործոց» անվանումը, ինչը յուրօրինակ «որակի նշան» էր:

Խորհրդային մոդեռնիզմի հսկայական տարածքում բազմաթիվ հետաքրքիր լուծումներով առանձնանում էր Հայաստանի ճարտարապետությունը, որի բազմաթիվ կառույցների թվում կային նաև իրական գլուխգործոցներ՝ Հայոց ցեղասպանության զոհերի հուշահամալիրը, «Մոսկվա» (ամառային դահլիճը) և «Ռոսիա» («Այրարատ») կինոթատրոնները, «Զվարթնոց» օդանավակայանը, Կամերային երաժշտության տունը, Մարզահամերգային համալիրը, Ռաֆայել Իսրայելյանի և Ջիմ Թորոսյանի գործերը:

Խորհրդային մոդեռնիզմի գլուխգործոցների թվում է Երևանի «Հրազդան» ստադիոնը:

Մոդեռնիզմի ժառանգությունը հսկայական է և ոչ հավասարարժեք: Մեծ մասը համեմատաբար կարճ գոյատևման համար նախատեսված զանգվածային բնույթի կառույցներ են: Հեռանկարում մոդեռնիզմի ֆիզիկապես մաշված կառույցների մեծ մասին սպասվում է, այսպես կոչված, ռենովացիա, որը կարող է նոր կյանք հաղորդել շատ շինությունների: Սակայն ռենովացիան կարող է նաև արմատական ձևեր ընդունել՝ վերածվելով մոդեռնիզմի ոչնչացման ալիքի: Դրա պատճառ կարող է դառնալ մոդեռնիզմի ճարտարապետության, որպես խորհրդային դարաշրջանի վերապրուկի, հանդեպ վերաբերմունքը:

Երևանի «Հրազդան» ստադիոնը: Ճարտարապետներ՝ Կ. Հակոբյան, Գ. Մուշեղյան, կոնստրուկտոր՝ Է. Թոնունյան: 1970

Պոստմոդեռնիզմի ժամանակների պարադոքս դարձավ մոդեռնիզմի որոշ գլուգործոցների արժեքի ճանաչման հետ մեկտեղ դրանց ժխտումը: Սկսվեց մոդեռնիզմի բազմաթիվ գլուխգործոցների ավերումը՝ լուսանցքում թողնելով բնակելի ֆոնդի, ենթակառուցվածքի, արդյունաբերական շինությունների հիմնական ծավալի ռենովացիան: Վերոհիշյալ գլուխգործոցներից շատերը դադարեցին գործել, հայտնվեցին կիսավեր վիճակում՝ դատապարտվելով քանդման (Երևանի մոդեռնիստական ամենամեծ համալիրներից մեկը՝ Երիտասարդական պալատը, հիմնահատակ ավերված է):

«Հրազդան» ստադիոնը, որը ստեղծվել է որպես իր ժամանակի հսկայական հանրային ամֆիթատրոն, այդ ժամանակից դուրս զրկվեց այդ ֆունկցիայից: Ֆուտբոլի 70,000 ինքնամոռաց երկրպագուները, որոնք լցնում էին մարզադաշտը՝ ցանցի մեջ թռչող գնդակը տեսնելու միահամուռ պոռթկումով, նոր պայմաններում, գոյատևման դատապարտված լինելով, դադարեցին հավաքվել մարզադաշտի տրիբունաներում: Նրանց մի մասը սկսեց հավաքվել տրիբունաների ստորին հարթակներում, որպեսզի ապրանքներ փոխանակի. մարզադաշտը սկսեց գործել որպես տոնավաճառ:

Պարզվեց, որ մոդեռնիզմի շինությունների դժվար լուծելի խնդիրը դրանց վերականգնումն է: Մաքուր բետոնե մակերեսներն առանց մշտական ուշադրության ու խնամքի, լքված վիճակում արագ խարխլվում են, կորցնում արտաքին գրավչությունը:

Պատկերացում է առաջանում նախկին տեսքը վերականգնելու անհնարինության, դրա համար անհրաժեշտ հսկայական գումարների մասին: Ցուրատեսակ բիզնես-պլան է ձևավորվում, ըստ որի, մոդեռնիզմի ճարտարապետությունը, փաստորեն, դատապարտված է ոչնչացման: Թերևս դա հավասարապես վերաբերում է ինչպես տնտեսապես բարեկեցիկ, այնպես էլ ոչ այնքան բարեկեցիկ երկրներին: 1988-ին Հոլանդիայում մոդեռնիզմի ժառանգության՝ 20-րդ դարի հուշարձանների, պահպանման նպատակով ստեղծվեց ոչ կառավարական DO CO MO MO կազմակերպությունը:

Այսօր «Հրազդան» ստադիոնը դեռ կանգուն է և պահպանում է իր վեհությունն ու արտահայտչականությունը: Սակայն մարզադաշտը գործնականում չի օգտագործվում, և այն քանդելու ծրագրեր կան:

Հնարավոր է, որ «Հրազդանը» քանդեն, ինչպես քանդել են և պատրաստվում են քանդել մոդեռնիզմի գլուխգործոցներից շատերը: Այդ դեպքում Երևանը կզրկվի իր լավագույն կառույցներից ևս մեկից:

Հնարավոր է, չի հաջողվի դիմակայել դրան: Եվ այն, ինչը դեռ կարելի է անել, «Հրազդանը», ինչպես մյուս գլուխգործոցները, նրա պատմությունը, նրա նախկին վեհասքանչ և հրաշալի տեսքը թղթի վրա պահպանելն է:

ամբողջական գիրքն այստեղ է՝
Bookmark